ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Վանաձոր Երկու հազար տաս թվականի, հունվարի մեկ 27.01.2010թ.

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան Հ/Ձ ՍՊԸ, իրավաբանական հասցեն՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 30ա՝ այսուհետ Կողմ-1, ի դեմս տնօրեն Հասմիկ Դերձյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությանը, այսուհետև Կողմ-2, ի դեմս ծառայության պետ Վ.խաչիկյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի «Մալաթյա Սեբաստիա» սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Գարեգին Մարտիրոսյանը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կողմ-1-ը պարտավորվում է Կողմ-2-ին՝ ք.Երևան, Սեբաստիա 3/7 հասցեյում ենթավարձակալությամբ տրամադրված ամբողջ տարածքը՝ ձմեռային սեզոնում ապահովել ջերմային ենթերգիայով՝ ջեռուցելով տարածքը, իսկ Կողմ-2-ը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել ջեռուցման դիմաց օգտագործված գազի արժեքը (ըստ 1 խորանարդ մետրի դիմաց գործող սակագնի)՝ համաձայն օգտագործվող տարածքի մուտքի մոտ տեղադրված կաթսայի առանձնացված հաշվիչի ցուցմունքի և օրենքով սահմանված սպասարկման ամենամսյա վճարի արժեքը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2 .1. Կողմ-1-ը իրավունք ունի.

Կողմ-2-ից պահանջել ժամանակին կատարելու սույն պայմանագրով սահմանված վճարները

2.2. Կողմ-1-ը պարտավոր է.

Ձմեռային սեզոնում ապահովել կողմ-2-ին ենթավարձակալության տրամադրված ամբողջ տարածքը ջերմային ենթերգիայով, սույն պայմանագրի պայմաններին համապատասխան՝ առանց շահույթ հետապնդելու

2.3. Կողմ-2-ը իրավունք ունի.

Լուծելու պայմանագիրը, եթե Կողմ-1-ի կողմից իր պարտավորությունները կատարվել են անբարեխղճորեն և (կամ) ոչ պատշաճ որակով

2.4.Կողմ-2-ը պարտավոր է.

Սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված ժամկետում և ամբողջ ծավալով վճարել ջեռուցման հետևանքով ծախսված գազի արժեքը և օրենքով սահմանված սպասարկման ամենամսյա վճարի արժեքը:

3. Գինը և վճարման կարգը

3.1.Սույն պայմանագրով նախատեսված գումարի չափը կազմում է՝ օգտագործված գազի արժեքը (ըստ 1 խորանարդ մետրի դիմաց գործող սակագնի), համաձայն ենթավարձակալված տարածքի մուտքին տեղադրված գազային կաթսայի առանձնացված հաշվիչի ցուցմունքի և օրենքով սահմանված սպասարկման ամենամսյա վճարի արժեքը, որը Կողմ-2-ը պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 6-ը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրը ուժի մեջ է կազման պահից և գործում է անորոշ ժամկետով:

5. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Ֆորս-մաժորային պայմանները դրանք անհաղթահարելի, անկախելի պարագաներ են երկրաշարժ, ջրհեղեղ, բնական այլ աղետներ, պետական հեղաշրջումներ և ՀՀ այն օրենքների փոփոխումն ու ընդունումը, որոնցով նախատեսված պայմաններն անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված գործողությունների շարունակումը: Նման դեպքերում կողմերի միջև դադարում է փոխադարձ պարտավորությունները:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը (արտակարգ դրությունը) շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրն՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով միյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն և (կամ) լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից

6.2 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կուղմին տրված է մեկ օրինակ:

Կողմ-1	Կողմ-2
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան Հ/Ձ ՍՊԸ, իրավաբանական հասցեն՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 30ա	ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությանը, իրավաբանական հասցեն Նալբանդյան 13, ծառայության պետ Վ.խաչիկյան, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի «Մալաթյա Սեբաստիա» սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Գարեգին Մարտիրոսյան
տնօրեն _____ Հ. Դերձյանի ստորագրություն	_____ Գ. Մարտիրոսյան ստորագրություն